Պարույր Սևակ

Երես ու աստառ

Ուռենիները նրա՛ համար են,
Որպեսզի... ցույց տան ջրին ճանապարհ:
Եվ ծուխը, նո՞ւյնպես, նրա՛ համար է,
Որպեսզի... ցույց տա ուղղություն քամուն:
Ծղրիդներն, անշո՞ւշտ, նրա՛ համար են,
Որպեսզի... մամլեն մութն իրիկնային
Իրենց նվագի նո՛ւյն ձայնանիշով:
Եվ արտույտները նրա՛ համար են,
Որպեսզի... իրենց երգով չորացնեն
Շաղն ու եղյամը վաղ առավոտվա:
Իսկ ուշ աշունն էլ նրա՛ համար է,
Որպեսզի ...
...Դանդաղ-դանդաղ լայնացնի տարածությո՛ւնը՝
Տերևաթափո՛վ...
Բանաստեղծնե՞րը:
Նրա համար չե՞ն,
Որպեսզի... այսպե՛ս
Ամե՛ն բան շրջեն աստառի վրա...

23.VI.1965թ.
Երևան